Եղիշե Չարենց

Երկիր Նաիրի

10

Այս անգամ եւս պատմությունն սկսվեց նրանից- այսինքն՝ Էլի իրանից՝ Համո Համբարձումովիչից- Մազութի Համոյից... Եվ ինչպե՞ս կարող էր իրանից, այսինքն՝ Համո Համբարձումովիչից- Մազութի Համոյից չսկսվել, երբ, ինչպես հայտնի է արդեն, ոչ միայն նաիրյան այդ քաղաքը, այլեւ ամբողջ Նաիրին նրա շուրջն էր դառնում, եւ ոչ միայն շուրջը դառնում, այլեւ, ինչպես գիտենք, հառնել էր նրա ուղեղից՝ նրա, Մազութի Համոյի ուղեղից սահելով՝ ուղեղայինը դարձել էր, կամ համարյա թե դարձել էր երկրային. դարձել էր- համարյա փաստ... Այո՛, այս անգամ եւս սկսվեց նրանից, որ քաղաքում հանկարծ լուրեր տարածվեցին, թե Համո Համբարձումովիչ Ասատուրովը- Մազութի Համոն գրավված վայրերն է մեկնում, իբր արտակարգ լիազոր՝ տեղում դիմադրություն՝ կազմակերպելու համար: Դրա հետ զուգընթացաբար քաղաքում պտտվել սկսեցին լուրեր, թե շարժվել է արդեն ոսոխը եւ գալիս է նաիրյան այդ քաղաքի վրա. գալիս է սելավանման՝ քար ու քանդ անելով այն ամենը, ինչ որ գտնում է իր ճանապարհին: Այսպիսի՛ ահա լուրեր պտտվել սկսեցին այդ առավոտ քաղաքում, եւ այս լուրերի հետ մեկտեղ, սրանց զուգընթաց՝ պտտվել սկսեցին քաղաքում- ոչ թե ուրիշ լուրեր, այլ կենդանի մարդիկ. քաղաքում պտտվող այդ ոչ թե լուրերը, այլ կենդանի մարդիկ մտնում էին տները եւ տներից դուրս էին բերում- ոչ թե իրեր, այլ զենքի ընդունակներին ու քշում կայարան, քշում ֆրոնտ: Եվ այս ամենը կատարվում էր ոչ թե այնպես, քամու բերածով, այլ այն պատերին փակցրած սպիտակ, բայց այս անգամ նաիրատառ, եւ ոչ թե հայտարարությունների, այլ հրամանների հիման վրա, հրամաններ, որոնց

ներքեւը- օ՜, զարմանալի զարմանք,- դրված էր ոչ թե ընկ. Վառոդյանի, կամ Տեղական Կոմիտեի, կամ զինվորական իշխանության, եւ կամ, վերջապես, իրա՝ Համո Համբարձումովիչի անունը, այլ- այդ նահիրատառ հրամանների ներքեւը գրված էր- երեւակայո՞ւմ եք- ոչ թե անուն, ազգանուն, կամ հիմնարկության անուն ասենք, այլ- երեք տառ միայն, երկու Հ. եւ մի Դ. (Հ.Հ.Դ.)... Եվ այդ երեք տառերի ազդեցությունն ավելի էր ուժեղ ու զարհուրելի, քան հազար-հազար թեկուզ եւ Մազութի Համոների, կամ զանազան իշխանությանց անունները... Մահվան սարսուռ էր փչում այդ երեք տառերից- ահա՛ թե ինչ: Երեք այդ զարհուրելի տառերով ստորագրված հայտարարությունը, ներողություն- հրամանը- սկսվում էր «Նահիրցինե՛ր» դիմումով. կարճ ու ազդու: Այո՛, կարճ ու ազդու էր այդ դիմումը, ինչպես կարճ ու ազդու էր այդ դիմումի, այսինքն՝ հրամանի, ներքեւի ստորագրությունը,- բայց հասկացողի համար մի ամբողջ, այո՛, մի ամբողջ տիեզերք կար այդ մի հատիկ բառում, եւ այս բանը հասկանում էին ոչ թե ընտրյալները միայն, ոչ թե բացառությունները, այլեւ ամենքը, բառացի ամենքը,- առանց բացառության: Ավելին՝ ոչ միայն հասկանում էին, այլեւ մտնում էին մեջը, այդ մի հատիկ բառի մեջ- ամենքը. սա՛ էր ահա զարմանալին: Այո, այդ մի հատիկ բառի մեջ էին մտնում թե՛ Համո Համբարձումովիչը- Մազութի Համոն ինքը, թե՛ ընկ. Վառոդյանը, թե՛ Սերգե Կասպարիչը- բժիշկը, թե՛ Օսեփ Նարիմանովը, թե՛ Հաջի Մանուկոֆ էֆենդին, թե՛ մանրավաճառ Կոլոպոտյանը, թե՛ Մեռելի Ենոքը ու Քոռ Արութը եւ անգամ վակզալի բաշիբուզուկներն ու դեզերտիրները. այսպիսի ահա տիեզերական տարողություն ուներ այդ դիմումը, այդ մի հատիկ բառը, որով սկսվում էր հրամանը:- «Նահիրցիներ,- ասված էր այդ հրամանում,- Hannibal ad portas!...»:- Հենց այսպես էլ տպված էր՝ ինգլիզի լեզվով, ինչպես կարծում էին սարսափած քաղաքացիները, եւ թերեւս սա էր պատճառներից մեկը, բացի վերոհիշյալ դիմում- մի հատիկ բառից, որ այդ հրամանը բոլոր նահիրցիների վրա թողեց մի զարհուրելի, համարյա միստիկական տպավորություն: «Թշնամին մոտենում է մեր դարբասներին,- ասվում էր ապա այդ հրամանում,- ամեն մի նահիրցի պետք է պարզ հաշիվ տա իրեն, թե ի՞նչ է նշանակում այդ...»: «Նահիրցինե՛ր,- կրկնված էր ապա տիեզերապարփակ դիմումն այդ հրամանում.- Մեր չքնաղ երկիրը, դարեր շարունակ երազված եւ այժմ մեր զավակների հավելյալ արյունով վերջապես ձեռք բերված մեր հայրենիքը, մեր դրախտավայր Նահիրին, կանգնած է անասելի վտանգի առաջ. մոտեցել է ոսոխը եւ կրկին, կրկին սրի ու հրի կոխան է կամենում

դարձնել մեր երկիր Նաիրին»...- «Նաիրցինե՛ր,- երրորդ անգամ դիմում էր հրամանը տիեզերքին ու ամենքին.- Մի բան է մնում անել այսօր ամեն մի իսկական նաիրցու՝ վերցնել զենք եւ ճակատ գնալ իր սեփական արյունով պաշտպանելու մեր աննման երկիրը,- ծծկեր երեխայից, մինչեւ իննսուն տարեկան ծերունին պետք է այսօր ռազմաճակատ գնա եւ իր կուրծքը դեմ անի ոսոխի սվիններին եւ իր սրբազան արյունով փրկի անկումից ու ավերումից նվիրական հայրենիքը- մեր դրախտանման Նաիրին»:- Եվ «Նաիրցինե՛ր, - չորրորդ ու վերջին անգամ դիմում էր հրամանը տիեզերքին ու ամենքին,- Հասել է վճռական րոպեն եւ Հ. Հ. Դ. մի կոչ ունի միայն անելու իր սիրեցյալ նաիրյան ժողովրդին. - Դեպի կռի՛վ... Ի զեն, վերջի՛ն անգամ ի զեն, տառապյալ նաիրյան ժողովուրդ. Նաիրին վերջին անգամ կանչում է քեզ: Եվ թող հեռանան մեր ճանապարհի վրայից վախկոտներն ու թուլամորթները, թող վտարվեն, անարգանքի սյանը գամվեն բոլոր նրանք, ովքեր այս ճակատագրական վայրկյանին իրենց անձնական կաշին ավելի բարձր կդասեն, քան նաիրասիրական վեհ գաղափարը: Հ.Հ.Դ. հայտնում է սրանով, որ տեղնուտեղը հրացանազարկ են արվելու բոլոր նրանք, ովքեր փորձ կանեն իրենց ողորմելի կաշին փրկելու համար ռազմաճակատ չգնալ, կամ փախչել ռազմաճակատից: Այդ է պահանջում մեզնից այսօր հայրենիքը, այդ է պահանջում այսօր մեր նվիրական Նաիրին: Օն, ուրեմն՝ ի զե՛ն, նաիրցինե՛ր,- դեպի ռազմաճակա՛տ...»: Այսպես էր վերջանում հրամանը, եւ ապա գալիս էին վերոհիշյալ երեք տառերը- Հ. Հ. Դ.:- Էլ կարո՞ղ է արդյոք զարմանալի թվալ, որ այդ հայտարարությունը, ներողություն, հրամանը բոլոր քաղաքացիների վրա թողեց մի անասելի, շշմեցնող, զարհուրելի տպավորություն: Այսպիսի մի անասելի իրարանցում ընկավ քաղաքում, որ, ինչպես կասեր Մեռելի Ենոքը՝ «մերը մանուկը մոռացավ», ժաժք եղավ կարծես, կարծես եկավ ահեղ դատաստանի օրը: Եվ, եթե ճիշտը կուզեք, հենց այդ օրվանից էլ պետք է հաշվել երկիր Նաիրիի եւ այդ քաղաքի վախճանի սկիզբը. եւ դա ոչ թե վերոհիշյալ հրամանի պատճառով, այլ այն, մեզ համար միանգամայն հասկանալի, իսկ այլ քաղաքացիների համար այնպես էլ անհասկանալի մնացած պատճառով, որ Մազութի Համոն, թեկուզ եւ ժամանակավորապես, թողեց իր հայրենի քաղաքը. իսկ ի՞նչ կարող էր անել այդ քաղաքն առանց Մազութի Համոյի, այսինքն՝ առանց այն առանցքի, որի շուրջը դառնում էր քաղաքը: Պարզաբանենք մեր միտքն օրինակով: Օրինակ՝ «Ո՞րն է ֆայտոնի նպատակը»,- հարցնում է մի անգամ Քոռ Արութին Մեռելի Ենոքը.

բայց Քոռ Արութը չի իմանում, եւ քանի որ Քոռ Արութը չի իմանում՝ իր տված հարցին պատասխանում է ինքը՝ Մեռելի Եռնքը. «Ֆայտոնի նպատակը օսն է,- պատասխանում է իր դրած հարցին Մեռելի Եռնքը ու պարզաբանում է հետո.- էն որ չեղնի- ֆայտոնը չի էրթա»:- Եվ մենք միանգամայն համամիտ ենք Մեռելի Եռնքին.- այդպես էլ տվյալ դեպքում: Երեւակայեցեք, ընթերցող, որ, ինչպես նաիրյան այդ քաղաքը, այնպես էլ ամբողջ Նաիրին, Մեռելի Եռնքի տերմինոլոգիայով ասած՝ մի հսկա «ֆայտոն» է, իսկ Համո Համբարձումովիչը- Մազութի Համոն՝ նրա «օսը» է, ի՞նչ կարող է անել «ֆայտոնը», այսինքն՝ նաիրյան այդ քաղաքը, կամ ամբողջ Նաիրին, առանց «օսի»- այսինքն՝ Համո Համբարձումովիչի- Մազութի Համոյի: Հարցնում ենք՝ ի՞նչ կարող է անել: Պատասխանը մեկն է.- ոչինչ ու ոչինչ:- Կքանդվի, տեղում կմնա՝ կփտի ու կթափվեն մասերը, ինչպես քայքայվող դիակի մասեր: Եվ այս հանգամանքն ավելի պարզ ու հասկանալի կլինի, եթե հիշենք, որ Մազութի Համոն ոչ միայն «օսն» էր նաիրյան այդ քաղաքի, այլեւ հոգին: Դե, երեւակայեցեք հիմա մարմնի դրությունը՝ առանց հոգու. ի՞նչ կլինի մարմինը, եթե հեռանա հոգին:- Սրա էլ պատասխանը մեկն է.- կքայքայվի, կտարրալուծվի, մարմին կազմող քիմիական տարրերն ամենքը մի կողմ կփախչեն ու կմնա ի՞նչ. ոչինչ. կմնա- մահ, մոռացության մշուշ- բաց տարածություն: Եվ նույնը, ճիշտ նույնը կատարվեց նաիրյան այդ քաղաքի, ապա եւ ամբողջ Նաիրիի հետ, հենց որ Մազութի Համոն թողեց այդ քաղաքը եւ գրավված վայրերը գնաց՝ տեղում դիմադրություն կազմակերպելու...

Մե՛ծ, մե՛ծ, անասելի սխալ էր Մազութի Համոյի բացակայելը քաղաքից. հետո, երբ նա վերադարձավ գրավված վայրերից- արդեն ուշ էր, քայքայվել էր արդեն քաղաքի մարմինը եւ ոչ մի հոգի չէր կարող այլեւս կենարար շունչ փչել ու վերստին գոյություն պարգեւել այդ քայքայված մարմնին: Ավելին՝ հետո, երբ Մազութի Համոն վերադարձավ արդեն գրավված վայրերից- ոչ միայն ի վիճակի չեղավ կենարար շունչ փչել քայքայվող քաղաքի սառած երակները, այլեւ շուտով ստիպված եղավ փչել իր սեփական շունչը, փչել- հավիտյան ու անդարձ. փչել- ընդմիշտ... Եվ նրա հետ միասին իրա շունչը փչեց երազյալն ու հավիտենականը՝ երազյալ ու հավիտենական, իրա՝ Մազութի Համոյի հանճա՛րեղագույն ուղեղից դեպի երկրայինն ու գոյացյալը ձգտող, համարյա գոյացած Նաիրին... Համոզված, այո՝ խորին համոզմունքով մենք կարող ենք

ասել, որ գուցե իսկի էլ տեղի չունենային թավալգլոր արագությամբ Մազութի Համոյի գնալուց հետո նաիրյան այդ քաղաքում կատարված դեպքերն ու իրողությունները, եթե Մազութի Համոն չհեռանար քաղաքից.- երկրորդ, բայց առաջինից ավելի կարեւորագույն սխալն էր այս, որ Մազութի Համոն ինքը, մասամբ եւ ամբողջ «Ընկերությունը» կատարեցին այդ ժամանակ.- առաջին սխալը, ինչպես մասամբ արդեն գիտենք, այն ստոր, նաիրուրաց, նաիրադավաճան մարդկանց հանդեպ խստագույն միջոցների չդիմելն էր ժամանակին, իսկ երկրորդ, եւ, ինչպես ասեցինք, ամենակարեւորագույն սխալը- Մազութի Համոյի քաղաքից հեռանալը: Այո՛, Մազութի Համոն չպետք է հեռանար քաղաքից, բայց նա, ինչպես տեսնում եք, հեռացավ, եւ անսպասելի, եղերական ահասարսուռ դեպքերն ու իրողությունները, նաիրյան այդ քաղաքի վերջին դեպքերն ու իրողությունները, իրար հաջորդեցին, ինչպես ասացինք՝ թավալգլոր արագությամբ...

Մազութի Համոյի քաղաքից հեռանալու օրը, ինչպես արդեն գիտենք, քաղաքում լույս տեսավ վերոհիշյալ զարհուրելի, համարյա միստիքական տպավորություն թողնող, հայտարարությունը, այսինքն՝ հրամանը: Եվ դրա հետ մեկտեղ, ինչպես գիտենք, քաղաքում պտտվել սկսեցին- ոչ թե լուրեր, այլ կենդանի մարդիկ, որոնք մտնում էին տները եւ հանում տներից- ոչ թե իրեր, այլ զենքի ընդունակներին: Բացի այս՝ ընկեր Վառոդյանը կայարանում կանգնեցրել էր մարդիկ, արտակարգ փափախավորներ, որոնք խստիվ արգելում էին հեռանալ քաղաքից: Սխալվեցինք, սկզբներում դեռեւս թույլատրվում էր քաղաքից հեռանալ, բայց- միմիայն կանանց եւ երեխաներին. եւ ահա սկսվեց նրանից, որ քաղաքից հեռանալ սկսեցին կանայք ու երեխաները: Եվ զարմանալին այն է, որ մի շարք այլափոխություններ տեղի ունեցան նաիրյան այդ քաղաքում այդ օրերին. քաղաքում խոսում էին, որ, վերին հրաշքով, կնոջ կերպարանք են ստացել մի շարք պատկառելի նաիրցիներ, ինչպես, օրինակ՝ պ. Աբոմարշը, կոշկակար Սիմոնը- Կլուբի Մեյմունը, մանրավաճառ Կոլոպոտյանի երիտասարդ տղան եւ ուրիշ շատ շատերը.- բայց հավատացնում եմ, ընթերցող, որ այստեղ ոչ մի հրաշք չկար. պարզապես բռնել էին դրանց կայարանում կանգնած արտակարգ փափախավորները- կանացի շորերով. ահա՛ եւ ամբողջը: Ի՞նչ հրաշքով, չգիտենք, բայց այդ պատկառելի նաիրցիներն ազատվեցին գնդակահարությունից. ավելին՝ շուտով իմացվեց, որ նրանք բոլորն էլ անհոգ

թոչունների նման թափառում են, թեպետեւ Նաիրիից դուրս գտնվող, բայց համարյա նաիրյան, չքնաղագույն մի քաղաքի լազուր երկնքի ներքո եւ նույնիսկ զարմանում են, որ մնացած նաիրցիները չեն հետեւում իրենց գեղեցիկ օրինակին... «Չե՛ն հետեւում...»- Բայց ո՞նց հետեւեին, երբ քաղաքի պատերից, օր օրի հետեւից, շշմած քաղաքացիների գլխներին էին թափվում մեկը մեկից զարհուրելի, մեկը մեկից անողոք ու սարսափ տարածող հրամաններ, այնպես որ ի վերջո քաղաքի խեղճ բնակիչները զարհուրում էին քթները բարձրացնել եւ չէին էլ բարձրացնում, որպեսզի իրենց այդ պատկառելի, նաիրյան քթներով չդիպչեն որեւէ զարհուրելագույն հրամանի: Ինչպե՞ս, ինչպե՞ս կարող էին հետեւել պ. Աբոմարշի եւ ընկերների օրինակին սարսափած նաիրցիները, երբ շուտով, ընկ. Վառոդյանի մի նոր խստագույն հրամանով, արգելվեց քաղաքից հեռանալ անգամ կանանց ու երեխաներին, որպեսզի, ինչպես ասված էր ընկ. Վառոդյանի հրամանում,- «խուճապ չառաջանա»: «Թշնամին պարտված է,- ասվում էր ապա այդ հրամանում,- եւ բոլորը կարող են հանգիստ տեղները նստեն»:- Դե եկեք ու ընկ. Վառոդյանի այսպիսի հրամաններից հետո հետեւեք պ. Աբոմարշի եւ ընկերների գեղեցիկ օրինակին... Բայց բանն այն է որ, չնայած ընկ. Վառոդյանի ու մյուսների խստագույն հրամաններին, չնայած կայարանում կանգնած արտակարգ փափախավորներին, որոնց ձեռքին էր իրապես գտնվում այդ ճակատագրական օրերին քաղաքի բանալին,- չնայած այդ ամենին՝ քաղաքի բնակչությունն օր օրի հետեւից նոսրանում էր ու նոսրանում, եւ նոսրանում էին ամենից առաջ քաղաքի վարի, այսինքն՝ կենտրոնական թաղերը: Ո՞նց, ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով, չգիտենք, բայց վաղուց արդեն առանց Նունուֆար Հանըմի ու իր, արդեն 18-ը տարեկան դարձած, «պզտիկի» էր իր ամենօրյա չորբան խմում Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը, եւ վաղուց արդեն նույն այդ դառը մենակությանն էր ենթարկված Արամ Անտոնիչը, դպրոցի տեսուչը (այժմ քաղաքի ու շրջանի բոլոր նաիրյան դպրոցների վարիչը): Եվ նույն այդ դառնադառը մենակության վիճակին էին վաղուց արդեն ենթակա թե՛ Օսեփ Նարիմանովը, թե՛ գեներալ Ալոշը, թե՛ տեր Հուսիկ քահանա-Խաչագողը,- բոլո՛ր, բոլո՛ր, բոլոր պատկառելի նաիրցիները՝ Ալեքսանդրյանի ու Լորիս-Մելիքյանի բնակիչները: Ասենք բացառություններ էլ, իհարկե, կային, ու այդ տխուր բացառությունների մեջ էին Տելեֆոն Սեթոն, Մեռելի Ենոքը, Քոռ Արութը, հայտնի ճաշարանատեր Բոչկա Նիկալայը եւ շատ ու շատ նման, թեկուզ եւ Ալեքսանդրյանի ու Լորիս-Մելիքյանի վրա խանութ ունեցողները, բայց էապես հասարակ,

մանր-մունր մարդիկ: Սրանք բոլորն էլ իրենց ընտանեկան հարկի ներքո դեռեւս վայելում էին ընտանեկան կյանքի բոլոր քաղցրությունները: Իսկ ինչ վերաբերում է վերի թաղերի, այսինքն՝ բերդի եւ Առաքելոց եկեղեցու թաղերի բնակիչներին, դրանք բոլորն էլ տեղները նստած էին մնացել, եւ, ընկ. Վառոդյանի հրամաններին հետեւելով՝ նստած էլ մնում էին, որպեսզի խուճապ չառաջացնեն: Բայց շա՞տ բան էր կախված այդ վերի թաղերի բնակիչներից, այդ «բռի անասուններից», ինչպես անվանում էր նրանց վարսավիր Վասիլը, որը, ի դեպս, վաղուց արդեն փակել էր իր հռչակավոր վարսավիրանոցը եւ ռազմաճակատ էր գնացել, ուր, ընկ. Վառոդյանի կողմից նշանակված լինելով՝ մթերքներ էր հայթայթում նահրյան բանակին: Թե ինչո՞վ բացատրել վարսավիր Վասիլի այս տարօրինակ քայլը- չգիտենք, սակայն այդ բանն ավելի քան լավ գիտեր Հաջի Մանուկոֆ էֆենդին, որ նույնպես «հայթաթող» էր, բայց ոչ թե «փինթի», ինչպես վարսավիր Վասիլը, այլ- խոշոր, անգամ ամենախոշոր, խոշորագույն: Այո՛, նոսրացել էր քաղաքի բնակչությունը, սակայն այս նոսրացումը հարկավոր է հասկանալ ոչ թե քանակի, այլ որակի իմաստով. քաղաքից հեռացել էին արդեն ամենապատկառելի քաղաքացիների ընտանիքները, բայց դրանց տեղը շրջանի գյուղերից քաղաք էին փախել հազարավոր նոր ընտանիքներ, որոնք լցրել էին փողոցները սայլերով, եզներով, կովերով, երեխաներով եւ տնային այլ անասուններով, բացի տղամարդկանցից, որոնց վաղուց արդեն ռազմաճակատ էին ուղարկել ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները: Քաղաքի որակն էր փոխվել ամբողջովին- ահա՛ թե ինչ. ու փոխվել էր քաղաքի տեսքը: Եվ այս հանգամանքը մեծ մտահոգություն էր պատճառում ընկ. Վառոդյանին, բայց չնայած նրա մի շարք ավելի քան խստագույն հրամանների, այնպես էլ չհաջողվեց շրջանից փախած այդ «վախկոտ ոչխարներին» իրենց տեղերն ուղարկել. նրանք չգնացին, չնայած անգամ նրան, որ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները քանիցս փորձեցին մտրակային լեզվի փոխել ընկ. Վառոդյանի հրամանների նահրյան քաղցր լեզուն: Չօգնեց, ոչինչ չօգնեց, դրանք մնացին քաղաքում, անբան անասունների նման թափված մնացին նահրյան չքնաղ այդ քաղաքի ոչ այնքան էլ չքնաղ փողոցներում ու լցրին ոչ այնքան էլ չքնաղ փողոցներն իրենց ահռելի գարշահոտությամբ: Երեւակայո՞ւմ եք՝ հենց այդտեղ, նահրյան չքնաղ այդ քաղաքի ոչ այնքան էլ չքնաղ փողոցներում էլ նրանք ուտում էին ու քնում եւ կատարում իրենց բոլոր բնական առաքումները: Բայց ընկ. Վառոդյանին ջղայնացնողը գերազանցապես այն էր,

որ դեզերտիրների կատարյալ բույներ էին դարձել փողոցներում, բակերում ու այգիներում թափված մարդկային այդ գարշահոտ կույտերը. ռազմաճակատից փախչում էին ռազմիկները եւ պահվում դրանց մեջ, դրանց սայլերի արանքում, վերմակների տակերին եւ նույնիսկ իրենց կանանց ու մայրերի փեշերում: Եվ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները, իրենց ամոթխածությունը մի կերպ զսպելով, շատ անգամ ստիպված էին լինում դեզերտիրներ որոնել... շրջանից փախած այդ կանանց փեշերում: Բայց այս բոլորը դեռ էլի ոչինչ, մի կերպ կարող էր հարթվել, սակայն քաղաքի մեծագույն դժբախտությունն այն եղավ, որ մի գեղեցիկ օր էլ ընկ. Վառոդյանը եւ Սերգե Կասպարիչը նկատեցին, որ քաղաքում փակվել են համարյա բոլոր խանութները: Ընկ. Վառոդյանը եւ Սերգե Կասպարիչը, որ Մազութի Համոյի գնալուց հետո նրա տեղակալն էր Տեղական Կոմիտեում եւ Քաղաքային Խորհրդում, շուտափույթ կերպով մի հրաման արձակեցին, որ խանութները բացվեն. բայց, ավաղ, խանութները չբացվեցին, իսկ ժողովուրդը մթերք էր ուզում- չայ, սապոն, նավթ, լուցկի եւ էլի հազար ու մի նման զահրումար: Տեսնելով, որ անելանելի է դրությունը, Քաղաքային Խորհրդում մի ինչ-որ վերի թաղեցի հարց բարձրացրեց, որպեսզի խանութներից մի քանիսը ջարդեն, եւ Քաղաքային Խորհուրդը ինքը վաճառել սկսի այդ խանութների ապրանքները: Ինչպես եւ կարելի էր սպասել, առաջարկն ընդունվեց միաձայն: Բայց ցավալին այն է, որ երբ ջարդեցին խանութները- դուրս եկավ, այսինքն՝ ոչինչ էլ դուրս չեկավ խանութներից- խանութները դատարկ էին, ինչպես Քոռ Արութի ձախ աչքը... Հարց՝ ո՞ւր էին այդ խանութների ապրանքները: Պատասխան՝ չկային- եւ ուրիշ ոչինչ: Եվ այն էլ ոչ միայն ապրանքները չկային, այլեւ իրենք- ապրանքների տերերը. զարմանալի հրաշքով վերացել էին նրանք նահրյան այդ քաղաքից, չնայած կայարանում կանգնած արտակարգ փափախավորներին: Գուցե ռազմաճակա՞տ էին գնացել նրանք, կարող է հարցնել ընթերցողը. բայց մենք ստույգ տեղեկություններ ունենք, որ նրանք այնտեղ չէին: Եվ սա էլ, այս ամենն էլ դեռ հեչ, եթե չլիներ քաղաքը եւ ռազմաճակատը քայքայող ամենամեծ չարիքը, որի մասին քանիցս թեթեւակի հիշատակեցինք,- դեզերտիրությունը: Ամեն առավոտ տներից ու փողոցներում թափված մարդակույտերից, սայլերի արանքից եւ նույնիսկ կանանց փեշերի տակից հազարներով հանում էին ու ռազմաճակատ ուղարկում դեզերտիրների հարյուրավոր խմբեր,- բայց գիշերը, մութն ընկնելուն պես, նրանք կրկին փախչում ու քաղաք էին վերադառնում բազմաթիվ խմբերով, եւ հաջորդ առավոտ

ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորների կողմից էլի ճակատ քշվում, որ մութն ընկնելուն պես նորից վերադառնան քաղաք: Չարիք էր, անասելի չարիք, նաիրյան խայտառակություն: Ի՞նչ միջոցներ ասես, որ ձեռք չէին առնում անասելի այդ չարիքի առաջն առնելու համար Զինվորական Գերագույն Ատյանի նախագահ բժիշկ Սերգե Կասպարիչը եւ Բերդի հրամանատար ընկ. Վառոդյանը. սրանց հրամանով՝ ծեծի, հրապարակային ամբաստանության, թքի ու մուրի էին ենթարկվում այդ նաիրադավաճան լրբերը, բայց չէր օգնում ոչինչ, դրությունը նույնն էր մնում, նորից փախչում էին ռազմաճակատից, ինչպես սարսափած ոչխարներ, եւ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորների կողմից նորից ճակատ էին քշվում թքելով ու մրելով: Պարզ է, որ այսպես չէր կարող շարունակվել. հարկավոր էր գերագույն միջոցի դիմել, բայց այդ գերագույն միջոցին դիմելուց առաջ հարկավոր էր գտնել չարիքի արմատը: Եվ չարիքի արմատը գտնվեց. եւ այդ չարիքի արմատը գտնողը, այսինքն՝ ոչ թե գտնողը, այլ այդ արմատի վրա առաջին անգամ մատ դնողը էլի՛ ինքն էր, նույն ինքը՝ հանճարեղագույն Մազութի Համոն, որ համապատասխան բովանդակությամբ գրություն էր ուղարկել ռազմաճակատից: Այո, նա՛ էր էլի, էլի նույն հանճարեղագույն Մազութի Համոն, որ իր վճռական մատը վերջապես կարողացավ դնել չարիքի իսկական արմատի վրա. ասում ենք կարողացավ «մատը դնել», որովհետեւ այնքան էլ, վերջ ի վերջո, դժվար բան չէր վերջիվերջո այդ արմատի գտնելը, որովհետեւ նա, այդ արմատը, ոչ թե թաղված էր գետնում, ինչպես ամեն մի արմատ, այլ ցցված էր դուրս, ինչպես նաիրյան մի քիթ, եւ վաղուց արդեն բոլորն էլ տեսնում էին այդ չարաբաստիկ քիթը, այսինքն՝ արմատը: Բայց- մի բան տեսնելը, տարբեր բան- տեսածի վրա վճռական կերպով մատ դնելը: Տեսնում էին, այդ չարաբաստիկ արմատը բոլորն էին տեսնում, բայց, կրկնում ենք, Մազութի Համոն էր միայն, որ ժամանակին մատնանիշ արավ այդ արմատը եւ առաջարկեց այն հիմքից պոկել եւ դեն շպրտել, ինչպես վարակող մի սպի: «Դեզերտիրության արմատը հարկավոր է տեսնել այն նաիրադավաճան սրիկաների մեջ, որոնց առաջնորդն էր մեր քաղաքում անհայտ չարագործների (հարկավոր է ասել բարեգործների, փակագծում ավելացրել էր Մազութի Համոն) ձեռով շանսատակ եղած Կարո Դարայանը,- այսպես էր գրել ռազմաճակատից ուղարկած իր նամակ-հրահանգում Մազութի Համոն.- Դրանք լցրել են հիմա ռազմաճակատը եւ դեզերտիրություն են քարոզում մեր արի զինվորներին, դրանք խոստանում են

զինվորներին հող, խաղաղություն ու հանգստություն եւ նման լկտի միջոցներով քայքայում են մեր բանակը,- գրել էր Մազութի Համոն իր այդ հրահանգ-նամակում:- Դրանց վերաբերմամբ հարկավոր է ամենախիստ միջոցների դիմել, չքաշվել անգամ գնդակահարությունից»,- հրահանգել էր վերջում Մազութի Համոն եւ հրահանգի վերջին տողերը երեք անգամ ընդգծել. Մազութի Համոյի այդ ընդգծումներն են ահա, որ մենք անվանում ենք «մատ դնել»:- Եվ իրոք որ. Մազութի Համոյի այդ հրահանգ-նամակն ստացվելուց հետո բոլորը բաց արին աչքերը ու մնացին, ինչպես վարսավիր Վասիլը կասեր- «էշ կտրած».- այդ ո՞նց էր, որ իրենք չէին հասկանում այդպիսի հասարակ մի բան, հասարակ, նո՛ւ, ինչպես օրվա լույսը: Այսպես թե այնպես՝ չարիքի արմատը գտնված էր արդեն, եւ ահա ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորներն սկսեցին այդ արմատը պոկելու համար արտակարգ պատրաստություններ տեսնել: Հիշում եմ՝ քաղաքի մեյդանում ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները գեղեցիկ մի օր իրարից մի հեռագրական հեռավորությամբ կանգնեցրին երկու հեռագրասյուն եւ դրանց վրա խփեցին երրորդը:- «Էդ ի՞նչ կշինեք, եղբա՛յր»,- հարցրեց փափախավորներից մեկին այդտեղ կանգնած երեխաներից մեկը, որ խորին հետաքրքրությամբ ու ակնածանքով հետեւում էր երրորդ հեռագրական վրա նստած արտակարգ փափախավորի արտակարգ շարժումներին:- «Քյանդրբազի չվան կշինենք, որ դեզերտիրները վրան քյանդրբազ խաղան»,- պատասխանեց փափախավորը եւ երեխաներն ուրախ հռհռացին, պատկերացնելով, երեւի, որ բավականին զվարճալի մի բան պետք է լինի այդ զվարճալի դեզերտիրների քյանդրբազությունը: «Քյանդրբազի չվանը», ճիշտ է, շինեցին, բայց, ցավոք սրտի, հարկավոր է ասել, որ ոչ արտակարգ փափախավորները եւ ոչ էլ հիշյալ երեխաներն առիթ ունեցան այդ զվարճալի դեզերտիրների «քյանդրբազությունը» տեսնելու. հեռագրասյուները կանգնեցնելուց երկու օր հետո, դեպքերի գլխիվայր արագությամբ, նահրյան այդ քաղաքն ընկավ, եւ արտակարգ փափախավորների շինած այդ «քյանդրբազի չվանի» վրա- օ, ճակատագրի եղերական հեգնանք,- հարկադրված եղան քյանդրբազություն անել- երեւակայո՞ւմ եք- ինքն՝ ընկ. Վառոդյանը, Սերգե Կասպարիչը- բժիշկը եւ Համո Համբարձումովիչ Ասատուրովը- Մազութի Համոն... Ճակատագրի տարօրինակ մի խաղ, բախտի եղերական մի հեգնանք էր դա, ընթերցո՛ղ, որ դեպքերի այնքան ողբերգական ու սխրալի բերումով եզրափակելու եկավ նահրյան այդ քաղաքի աղետալի պատմությունը...

«Հեռագրասյուները» կանգնեցնելու օրն էր հենց, որ Մազութի Համոն անսպասելի կերպով վերադարձավ քաղաք: Բանն այն է, որ արդեն գրավված էին գրավված վայրերը. ավելին՝ ոսոխը, Հավիտենական Հիվանդը, անսպասելի մի հրաշքով արդեն անցել էր սահմանի այս կողմը եւ եկել, իր թափթփուկ բանակներն էր դրել քաղաքից 30 վերստ հեռավորության վրա: Սարսափ առած նախիրների նման՝ նաիրցի ռազմիկները փախել էին ոսոխից եւ լցրել քաղաքը. էլ ոչ «դեզերտիր» էր մնացել, որ քյանդրբազ խաղացնեին, ոչ բան. հո չէ՞ր կարելի մի ամբողջ բանակ երեք հեռագրասյան վրա քյանդրբազ խաղացնել: Թե ի՛նչ էր ներկայացնում քաղաքն արդեն- դժվար է նկարագրել: Երեւակայեցեք, ընթերցո՛ղ, որ մի առավոտ վեր եք կենում ձեր տեղից եւ ուզում եք շորներդ հագնել, բայց տեսնում եք, որ անհասկանալի մի հրաշքով քանդվել են ձեր շորերի բոլոր կարերը. վերցնում եք ձեր շապիկը- թափվում են շապկի մասերն առանձին-առանձին՝ թեւը մի կողմ է գնում, օձիքը՝ մի կողմ, մնացածը- ուրիշ մի կողմ. վերցնում եք ձեր վարտիքը- նույնը. դե հիմա սրան ավելացրեք եւ այն, որ հանկարծ հրդեհ է ընկնում ձեր բնակարանը.- ի՛նչ պիտի անեք. դո՞ւրս վազեք. բայց դուրսը կանգնած են երկու կանայք եւ երեխաներ. տկլոր հո չե՞ք երեւա կանանց եւ երեխաների աչքին.- նե՞րսը մնաք.- բայց ներսում էլ ձեզ խեղդում է ծուխը, եւ մի վայրկյան չանցած՝ հրդեհի ալ-կարմիր բոցերն արդեն լիզել կսկսեն ձեր մարմինը... Այսպիսի՛ ահա անելանելի դրության մեջ ընկավ Մազութի Համոն գրավված վայրերից վերադառնալիս. քաղաքի, պատկերավոր ասած՝ բոլոր կարերն արդեն քանդվել էին, մասերից ամեն մեկը մի կողմ էր փախել, իսկ քաղաքի շուրջը- հրդեհ էր. ծուխը լցվել էր արդեն քաղաքը եւ մոտենում էին արդեն քաղաքի ծխախեղդ մարմնին ահավոր հրդեհի ալ կարմիր բոցերը: Ի՞նչ էր մնում անելու Մազութի Համոյին. փախչե՞լ, մնա՞լ.- բայց ինչպե՞ս կարող էր, ասացեք խնդրեմ, փախչել Մազութի Համոն. կարո՞ղ էր արդյոք փախչել մարդու հոգին եւ իր սեփական, հարազատ մարմինը թողնել հրի բերան... Եվ Մազութի Համոն մնաց. ոչ միայն մնաց, այլեւ իր վրա վերցրեց բովանդակ իշխանությունը. մի վերջին ճիգ եւս, գերմարդկային մի ճիգ գործադրել կամեցավ Մազութի Համոն, որ փրկի դրությունը. բայց դրությունը չփրկվեց.- ուշ էր, բավականին ուշ էր արդեն, եւ դրությունը չէր կարող փրկել այլեւս ոչ մի, թեկուզ եւ գերմարդկային, ճիգ...

Ո՞նց, ո՞նց փրկեր դրությունը Մազութի Համոն, երբ, ինչպես ասացինք, քանդվել էին արդեն քաղաքի բոլոր կարերը, եւ ոչ մի, թեկուզ եւ հանճարեղագույն, դերձակ չէր կարող այլեւս իրար միացնել այդ ոչ միայն իրարից բաժանված, այլեւ զարմանալի թափով իրարից խույս տալ սկսող, մասերը. Համոն Համբարձումովիչի բացակայության ընթացքում այնպիսի մի չտեսնված զարգացման էին հասել քաղաքի, ինչպես ասում են՝ կենտրոնախույս ուժերը, որ այլեւս անհնարին էր դրանք ոչ միայն ոչնչացնել, այլեւ չեզոքացնել: Երեւակայեցեք՝ ընդամենը մի ամիս բացակայությունից հետո քաղաք վերադարձավ Մազութի Համոն,- եւ ի՞նչ. առաջին հերթին դեպի բերդը վազեց Մազութի Համոն եւ նրա աչքերի առաջ պատկերացավ... Օ, այն, ինչ որ պատկերացավ Մազութի Համոյի աչքին բերդում- թող ոչ մի գերագույն հրամանատարի չպատկերանա... Բերդը, նաիրյան արքաների շինած եւ դարեր շարունակ հազար չարի ու ոսոխի իր քարակերտ կուրծքը դեմ դրած այդ բերդը, Մազութի Համոն գտավ ողբալի վիճակում...- Ջարթնեցին տարիների մուժից, մշուշից ելնելով՝ թունդ առան Մազութի Համոյի սրտում... երազները. ելան, Մազութի Համոյի դառնաթախիծ սրտից ելնելով՝ Մազութի Համոյի վշտից ու դառնությունից բորբոքված հանճարեղագույն ուղեղը խուժեցին... դարավոր սպասումները... Մի՞թե այսպես էր երազել Մազութի Համոն այս օրը. մի՞թե այսպես էր նկարվել Մազութի Համոյի հանճարեղագույն ուղեղում- բերդը, նաիրյան այս բերդը՝ հույսով ու սպասումով հարուստ այն հեռու օրերին, երբ «Լույսի» գրասենյակում նստած այս օրերն էր երազում ինքը, այն ժամանակ դեռ միմիայն «Լույսի» կառավարիչ Մազութի Համոն... Այստեղից, այո՛, բերդի այս ժայռակերտ պատնեշների վրայից պիտի ռումբեր տեղային մի օր, եթե այդ օրը գար... Այստեղից, այո՛, բերդի այս ժայռակերտ պարիսպների վրայից իջներ պիտի մի օր- պիրկ, անպարտ կորովը նաիրյան ցեղի... Որպես երկաթե մի բռունցք՝ իջներ պիտի մի օր թշնամու գլխին:- Այստեղից, բերդի այս անառիկ բարձրություններից հառնելով՝ պիտի ելներ ահասաստ, պիտի հառներ հաստատ նաիրյան ոգին, կորովը, ուժը հազարամյա- նաիրյան աշխարհի... Ու պիտի վառվեր նորից, պիտի ժպտար խնդագին երկիրը հազարամյա- հնամյա Նաիրին... Ահա՛ թե ինչ էր երազել Մազութի Համոն «Լույսի» գրասենյակում անցկացրած իր անքուն գիշերներին՝ այս օրվան սպասելիս... Օրը եկավ: Դեպքերի անսպասելի, հեքիաթային բերումով՝ քաշվեցին սոխական բանակները նաիրյան աշխարհից. դեպքերի անսպասելի, հեքիաթային բերումով՝

հանկարծ մարմնավորվեց, իրողություն դարձավ երկիրը Նաիրի... Եվ ի՞նչ. Հավիտենական Հիվանդի հորդաներից սարսած, Մահամերձի Թափթփուկ բանակներից սարսափահար՝ նախիրների նման պուկ տվին նաիրյան բանակները. մնացել է բերդը միայն, նաիրյան այս բերդը, որ վաղը ոտնակոխ պիտի արվի Հավիտենական Հիվանդի հորդաների կողմից, պիտի լիցե նորից Հավիտենական Հիվանդի հորդաների ոտները, Հավիտենական Հիվանդի թափթփուկ բանակների չաքմաների փոշին... Ո՞ւր է, ո՞ւր է ուժը, ո՞ւր է կորովն հնամյա նաիրյան ցեղի. ո՞ւր է երկաթե բռունցքը... Ո՞ւր է,- հարցնում էր, դառնացած Եհովայի նման մազերը պոկելով, Մազութի Համոն.- «Ո՞ւր է»: Դառնացած Եհովայի նման պոկոտում էր մազերը ու նաիրյան արքաների կորովն էր ոգեկոչում բերդի ամենաբարձր աշտարակի վրա կանգնած, նաիրյան եռագույնի դողդոջ փայտին կոթնած, Մազութի Համոն.- «Ո՞ւր է»,- հարցնում էր Մազութի Համոն, բայց պատասխան չկար. բերդի հազարամյա մռայլ պարիսպներն էին միայն լուռ նայում Մազութի Համոյին, վերջին այդ արքայատիպ նաիրցուն, որ պոկոտում էր մազերը եւ նաիրյան կորովը ոգեկոչում: Ու չկար կորովը. ու լուռ էր բերդը: Ու բերդի ամենաբարձր աշտարակի վրա կանգնած, նաիրյան եռագույնի դողդոջ փայտին կոթնած՝ դառնաթախիծ թախծեց, լաց եղավ, ինչպես այն ժողովում, Մազութի Համոն, եւ Մազութի Համոյի, վերջին այդ արքայակերպ նաիրցու բոցե արցունքներն այրեցին նաիրյան հնամյա այդ բերդի հազարամյա պատերը... «Ո՛չ»,- ձեռքը նաիրյան եռագույնի դողդոջ փայտին խփելով, դառնաթախիծ լացի, հրե արցունքների միջից բացականչեց հանկարծ Մազութի Համոն. «Չի՛ լինի»:- Ցնցվեց. վայրկենական քնից կամ կաթվածից արթնացածի նման՝ ցնցեց իր գլուխը Մազութի Համոն. հանեց թաշկինակը եւ սրբեց աչքերը: Եվ նոր կարծես տեսավ, որ կանգնած են շուրջն ընկ. Վառոդյանը, բժիշկը, մի երկու նաիրյան գեներալ եւ մի քանի նաիրցի սպաներ. անհուն պատկառանքով նայում էին նրանք Մազութի Համոյին ու լուռ, լուռ, լուռ էին, ինչպես բերդի պատերը: «Ո՞ւր են»,- ցասման շանթեր տեղալով աչքերից՝ հարցրեց որոտաձայն Մազութի Համոն.- «Ո՞ւր են մյուսները»: Բայց «մյուսները», որոնց մասին հարցնում էր Մազութի Համոն, իր քիչ առաջ ոգեկոչած նաիրյան կորովի եւ ուժի նման, չկային. պարզվեց, որ բերդի սպայության բավականին նկատելի մասը գիշերը հեռացել է բերդից եւ չի վերադարձել:- «Իսկ ո՞ւր է բերդի գարնիզոնը»,- ավելի մեղմ, կարծես կոտրած ձայնով, շարունակեց իր ռեւիզիան Մազութի Համոն. ընկ. Վառոդյանը ցույց տվեց

մատով. Մազութի Համոն նայեց ընկ. Վառողյանի մատի ուղղությամբ. եւ Մազութի Համոն տեսավ.- այնտեղ, բերդի երկրորդ աշտարակի վրա Մազութի Համոն տեսավ ի մի խռնված նաիրյան տրեխավոր ռազմիկների բավականին բազմամարդ մի խումբ, որ զբաղված էր իրեն, Մազութի Համոյին նայելով: «Ներողություն...,- ասաց Մազութի Համոն- դրանք... թոփ քցել... գիտե՞ն...»:- «Այո՛, ճիշտ այդպես է»,- զինվորական պատիվ բռնելով՝ պատասխանեց գեներալներից մեկը, եւ Մազութի Համոյի արքայակերպ դեմքը մեղմիվ լուսավորվեց մի մանկական, համարյա իդիոտային, ժպիտով: Հասկացավ Մազութի Համոն՝ վերջացած էր. ուղեղում, հատնող մոմի վերջին բոցերի նման, հիսախառն երերաց, կողքեկողք ընկավ... երկիրը Նաիրի: Բայց- «Ո՛չ,- բացականչեց մտքում, վերջին ուժերը հավաքելով, Մազութի Համոն.- Չի՛ լինի»: Ու հրամայեց նոր ռազմիկներ բերել բերդ, թնդանոթներ դնել, անգամ ցույց տվեց, թե ի՞նչ ուղղությամբ է հարկավոր դնել այդ թնդանոթները. հետո կառք նստեց եւ վերադարձավ քաղաք:

Քաղաքում սպասում էր նրան անսպասելի մի ուրախություն. ռազմաճակատից հաղորդագրություն կար ստացված, որ հերոսական մի գրոհով նաիրյան ռազմիկները տասը վերստ ետ են քշել թշնամուն եւ գրավել միանգամայն կայուն դիրքեր: Ավելին՝ տեղեկության մեջ ասված էր, որ շուտով հավանական է առաջխաղացում սկսեն եւ քշեն թշնամուն- մինչեւ Հայտնի Քաղաքը: Կարդաց Մազութի Համոն այդ հաղորդագրությունը եւ նրա սրտից կապարե մի ծանրություն ընկավ գետին. կասկածն ու քիչ առաջ նրան պատող հուսահատությունը նրա սրտից, ինչպես ասում են, ոնց որ ջնջոցով սրբեցին. շտկեց իր, քիչ առաջ բերդում կորված, մեջքը Մազութի Համոն. աչքերը լցվեցին աշխուժությամբ ու կայտառությամբ: Մինչ այդ քաղաքում սկսվել էր անօրինակ մի խուճապ. շրջանից փախածներն ու վերի թաղեցիք ամեն ինչ հավաքել՝ պատրաստվում էին գաղթի. հազարավոր խմբերով դրանք բռնել էին փողոցներն ու դեպի կայարան տանող խճուղին. քաղաքի քիչ թե շատ պատկառելի բնակիչներն արդեն գտնվում էին կայարանում, եւ մի երկու գնացք արդեն հեռացել էր՝ քաղաքի պատկառելի բնակիչներով բեռնված: Թե ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ կայարանում- անհնարին է նկարագրել: Խուճապի ենթարկված բազմահազար ամբոխը լցրել էր պլատֆորմը. տեղի էր ունենում այնպիսի մի իրարանցում, որի հանդեպ մանկական մի խաղ էր Բաբելոնի

աշտարակաշինությունը, եթե միայն դա իրոք տեղի է ունեցել: Մարդիկ կոխոտում էին իրար եւ իրարու վրայով սողալով՝ առաջ անցնում, որպեսզի մոտ լինեն եկող գնացքին. մայրերն ամբոխի գլուխների վրայով առաջ էին նետում իրենց երեխաներին, որպեսզի իրենք եւս առաջ սողան, բայց երեխաները խեղդվում էին ընդհանուր հրհրոցում, իսկ մայրերը, առանց երեխաներին հասնելու, փչում էին իրենց շունչը՝ չորս կողմից սեղմված: Տղոցկան կանայք ծնում էին կանգնած տեղերում, եւ նրանց ճիչը լսելի էր լինում անգամ այն ահռելի աղմուկում, որ բարձրացնում էր բազմահազար, սարսափից խելագարված, ամբոխը: Տղամարդիկ ծեծում էին իրար. կանայք ճանգռտում էին տղամարդկանց դեմքերը, եւ այս ամենի վրա շաչում էր արտակարգ փափախավորների մտրակը: Մտրակով ճանապարհ էին բաց անում նրանք եւ առաջ անցնում, հետներն առաջ տանելով զանազան պատկառելի նահրցիների ընտանիքներին, որոնք ընկեր Վառոդյանից կամ Մազութի Համոյից ունեին պատկառելի թղթեր: Բայց, չնայած արտակարգ փափախավորներին, չնայած անգամ «պատկառելի թղթերին», հաճախ չէր հաջողվում նրանց իրենց նպատակին հասնել. ամբոխը, կատաղած թշնամու նման, գրոհի էր դիմում ու ընդհանուր հորձանքում խեղդում թե՛ արտակարգ փափախավորներին եւ թե՛ նրանց հովանավորած պատկառելիներին: Անասելի, այո՛, աներեւակայելի բաներ էին կատարվում այդ ժամանակ կայարանում, բայց ավելի անասելին ու աներեւակայելին այն էր, ինչ որ տեղի էր ունենում քաղաքում: Քաղաքում ծայր էին առել հրդեհները: Քաղաքից հեռացող նահրցիները, նահրական անասելի, չտեսնված մի եռանդով, այրում էին իրենց տներն ու խանութները, որ ոսոխին չմնան: Տեղական իշխանությունը զուցե եւ դեմ լիներ նահրասիրության նման թեժ արտահայտություններին, եթե միայն, ինչպե՛ս ասում են՝ խելքը գլխին լիներ: Բայց նրա խելքը գլխին չէր, եւ ժողովուրդն անում էր այն ամենը, ինչ որ թելադրում էր նրան նահրասիրական բարձր զգացմունքը: Բայց այդ չէ զարմանալին. տներն ու խանութներն այրում էին ասենք, դրանց տերերը, այրում էր ժողովուրդը. բայց ո՞վ էր այրում հիմնարկությունները: Քաղաքում ասողներ կային, որ հրդեհներն սկսվել են հիմնարկություններից. ամենից առաջ այրվել էր «Լույսի» գրասենյակը, երեւակայո՞ւմ եք՝ իրա՝ Մազութի Համոյի գրասենյակը, որ ժամանակավորապես փակված էր՝ պահեստներում նավթ եւ Համո Համբարձումովիչի տրամադրության ներքո ազատ ժամանակ չլինելու պատճառով: «Լույսի» գրասենյակն այրվել էր Մազութի Համոյի քաղաք

վերադառնալուց մի օր առաջ, գիշերը (առավոտյան արդեն նա քաղաքում էր գտնվում)- եւ Մազութի Համոն, արտակարգ մի պատվասիրությամբ՝ քաղաք վերադառնալուն եւ հրդեհի լուրն ստանալուն պես՝ հրամայել էր, ինչ գնով էլ լինի, հրդեհի լափող ճիրաններից, որ արդեն մխացող մոխիրների էին փոխվել, ազատել «Լույսի» մատյաններն ու հաշիվները, բայց այդ կարելի՞ էր արդյոք, ընթերցո՛ղ, հնարավո՞ր էր արդյոք... Ապա այրվել էր «Մանր Վարկի Ընկերությունը», այսինքն՝ ընկերության շենքը, հետո- միլիցիատունը: Եվ, ասում եմ, դրանից հետո էր ահա, որ քաղաքից հեռացող նահրցիները ցուցադրել սկսեցին իրենց թեժ նահրասիրությունը, որ ահռելի արագությամբ ծավալվում էր քաղաքում եւ լցնում քաղաքի փողոցները նահրասիրական յուրօրինակ մի արտահայտությամբ, այսինքն՝ հրով ու ծխով: Այսպիսի ահա դրության մեջ էր քաղաքը, երբ Մազութի Համոն ստացավ ռազմաճակատից վերոհիշյալ ուրախալի հաղորդագրությունը: Ռազմական արտակարգ նիստ գումարեց իսկույն Մազութի Համոն, որը որոշում կայացրեց՝ 1) Գերագույն միջոցներ ձեռք առնել խուճապը կանգնեցնելու համար, 2) վերջ տալ հրդեհներին, 3) հրամայել ժողովրդին հանգիստ իր տեղը մնալ, որի համար արտակարգ միջոցներով արգելել քաղաքից հեռանալը, 4) արգելել գնացքների երթեւեկությունը: Որոշումը հանելով՝ Մազութի Համոն անձամբ հրամայեց կայարանին գնացքներ բաց չթողնել եւ ընկ. Վառոդյանի միջոցով արտակարգ փափախավորներ ուղարկեց՝ խճուղիով փախչող ժողովրդին վերադարձնելու կամ, ծայրահեղ դեպքում, մնացածների առաջն առնելու: Այս կարգադրություններին զուգընթաց՝ Քաղաքային Խորհուրդը վազեց Մազութի Համոն, որ նրա միջոցով եւս ազդի ժողովրդի տրամադրության վրա. արտակարգ նիստ նշանակեց, բայց, ցավոք սրտի, դուրս եկավ, որ քաղաքից բացակայում էին Քաղաքային Խորհրդի համարյա բոլոր անդամները. ոչ Գեներալ Ալոշը կար, ոչ մանրավաճառ Կոլոպոտյանը, ոչ Հաջի Օնիկ էֆենդին եւ ոչ էլ մյուսները. վերի թաղեցի անդամն էր միայն, որը մի անգամ արդեն ցույց էր տվել իր ամբողջ քաղաքական հմտությունը՝ փակ խանութները ջարդելու իր այն հիշատակելի առաջարկը մտցնելով, մի առաջարկ, որից, հիշում եք, թե ի՞նչ դուրս եկավ,- այսինքն՝ ոչինչ էլ դուրս չեկավ: Ի՞նչ պիտի աներ Քաղաքային Խորհրդի այդ մի հատիկ անդամի հետ Մազութի Համոն,- այո՛, ի՞նչ պիտի աներ:- Ոչինչ էլ չէր կարող անել Քաղաքային Խորհրդի այդ մի հատիկ անդամի հետ Մազութի Համոն. Մազութի Համոյին մնում էր միայն թափահարել իր ձեռքը եւ գնալ տուն՝ հանգստանալու. եւ

Մազութի Համոն թափահարեց իր ձեռքը եւ որոշեց տուն գնալ՝ հանգստանալու: Արդեն երեկո էր. հոգնել էր ինքը, ուղեղը նվում էր հոգնությունից, եւ հոգնությունից ուղեղում նվում էր... Նաիրին: Հարկավոր էր քնել, հանգստանալ,- եւ արդեն, կառք նստելով, ուզում էր կառապանին «քշի տուն» ասել Մազութի Համոն, երբ հանկարծ հիշեց, որ վաղուց արդեն քաղաքում չէ «տունը». գրավված վայրերը մեկնելուց առաջ քաղաքից ուղարկել էր Անգինա Բարսեղովնային եւ Սեւաչյա Պրիմադոննային Մազութի Համոն, որպեսզի միանգամայն ազատի իր, նաիրյան հոգսերով ծանրաբեռնված, ուսերը՝ ընտանեկան ավելորդ բեռից:- Հիշեց ու դառնորեն ժպտաց մտքում իր ազիզ կողակից Անգինա Բարսեղովնային Մազութի Համոն. ու, նրան ժպտալով, հիշեց Ագրիպպինա Վլադիսլավովնային Համո Համբարձումովիչը... «Քշի՛ր բերդը»,- հրամայեց կառապանին Մազութի Համոն ու ընկողմանեց կառքում. գլուխը ձեռքերի մեջ առավ. քնեց...

Հաջորդ առավոտ... Բայց լավ է չլուսանար այդ առավոտը, որովհետեւ այդ չարաբաստիկ առավոտը դեռ նոր էր լուսանում, երբ քաղաքում մնացած ժողովուրդը, որ վերոհիշյալ արտակարգ նիստի հրամանից եւ ռազմաճակատից ստացված ուրախալի հաղորդագրությունից հետո բավականին հանգստացել էր կարծես ու սրտապնդվել,- լսեց հրացանների տրաքտրաքոց եւ թնդանոթների դեռ բավականին հեռու, բայց հետզհետե մոտեցող որոտ: Ոչ մի ուժ այլեւս, անգամ ոչ մի երկնային վերին զորություն, ի վիճակի չէր «տեղը նստած» պահել քաղաքում մնացած ժողովրդին: Հսկա, տասնյակ եւ հարյուր հազարավոր գլուխներով հաշվող մի նախիրի նման, սարսափահար տեղահան եղավ քաղաքում մնացած ժողովուրդը. մի մասը բռնեց կայարանի ճամփան, մյուսը՝ խճուղու: Քաղաքի տները մեկը մյուսի հետեւից սկսեցին վառվել, եւ այդ վառվող տներում, հրի ու ծխի միջից, ինչ-որ բան էին փախցնում ռազմաճակատից նահանջած նաիրցի ռազմիկները: Հաստատ կարելի է ասել, որ այդ վայրկյանից քաղաքը կարելի էր արդեն ընկած համարել, բայց նա այդպիսին դեռ չէր համարվում, որովհետեւ, ոսոխը դեռ չէր կտրել փախուստի ճանապարհը եւ դեռ հնարավոր էր փախչել: Այդ վայրկյանից սկսած քաղաքում չկար այլեւս ոչ մի իշխանություն: Գերագույն Իշխանությունը բերդում էր հավաքվել, որպեսզի այնտեղից անմիջապես ղեկավարի ռազմական գործողությունները: Քաղաքի վարի թաղեցիք (այսինքն՝ կենտրոնական փողոցների բնակիչները) բոլորն էլ համարյա հեռացել էին քաղաքից, արդեն հեռանալ էին սկսել վերի թաղեցիք եւս, այնպես որ քաղաքի

բուն բնակչության չնչին մասն էր միայն դեռ քաղաքում գտնվում: Բայց, չնայած դրան, քաղաքը լեփ-լեցուն էր դեռ մարդկային բազմահազար, խռիվ, խայտաբղետ խմբերով, գերազանցապես շրջանից փախած «բռիներով...». Ծայր, վախճան չկար սրանց խայտաբղետ շարքերին:- Տելեֆոն Սեթոն եւս, որ մինչ այդ մի զարմանալի անփութությամբ քաղաքում էր մնացել, իր եղբոր՝ Քոռ Արութի եւ նրա հավիտենական ընկեր Մեռելի Ենոքի օգնությամբ այրեց իր հոչակավոր սրճարան-ճաշարանը եւ իր «չոլուխ-չոճուղը» հավաքած՝ բռնեց կայարանի ճամփան: Հարկավոր է ասել, որ մինչեւ սրճարանն այրելը, մինչեւ վերի թաղը վազելը եւ «չոլուխ-չոճուղն» հավաքելը բավականին ժամանակ անցել էր արդեն. թաղեցիք համարյա բոլորն էլ արդեն հեռացել էին, այնպես որ, եթե չհաշվենք ուրիշ մի քանիսին, որ այնպես էլ վերի թաղում մնացին, Տելեֆոն Սեթոյի թափորը վերջինն էր, որ հեռանում էր այդ թաղից: Վերի թաղեցիք փախել էին քաղաքից խճուղու ճանապարհով, այնինչ Տելեֆոն Սեթոն որոշեց կայարանով գնալ, հույս ունենալով, որ «վերինի օգնությամբ» իրենց կհաջողվի գնացք նստել: Եվ նրան, Տելեֆոն Սեթոյին, ինչպես եւ «չոլուխ-չոճուղին», Քոռ Արութին ու Մեռելի Ենոքին, հաջողվեց գնացք նստել եւ այդ աներեւակայելի հանգամանքը տեղի ունեցավ ոչ թե վերինի օգնությամբ, այլ իրա, Տելեֆոն Սեթոյի, ռազմագիտական քանքարի շնորհիվ: Բանն այն է, որ Տելեֆոն Սեթոն որոշեց կայարան գնալ ոչ թե քաղաքի միջով, որ միանգամայն անհնարին էր, այլ սարի վրայով, թեպետ սարի վրայով տանող ճանապարհն իջնում էր դեպի երկաթուղային կայարանից բավականին հեռու՝ կայարանին հակառակ ուղղությամբ: Եվ հենց այս էր պատճառը, որ նրանց հաջողվեց գնացք նստել: Արդեն կեսօր էր, հրացանների տրաքտրաքոցը եւ թնդանոթների թնդյունն արդեն լսելի էր բերդից համարյա թե մի երկու վերստ հեռավորության վրա, երբ Տելեֆոն Սեթոյի թափորն իջնում էր դեպի երկաթուղագիծը. թափորի առաջից, իր փոքրիկ երեխային գրկած, գնում էր ինքը՝ Տելեֆոն Սեթոն, կողքից, մի մեծ բոխչա գրկած, վազում էր նրա «օղլուշաղը». հետեւից վազում էր Քոռ Արութը՝ մի բավականին ծանր խուրջին շալակած, Քոռ Արութի հետեւից- Մեռելի Ենոքը: Մեռելի Ենոքը, այլ հարստություն չունենալով, տանում էր շալակին իր «վակզլի թյուքանը», այսինքն՝ մի, իր իսկ ձեռքով հին ափսեներից շինած, կշեռք, մի երկու գրվանքա-քարեր, մեկ էլ իր ունեցած չայն ու կալբասը: Այսպես էլ հասան նրանք երկաթուղագծին եւ ճիշտ իրենց առաջ կանգնած տեսան- գնացքը. գնացքը, փախչող նահրցիներով ծայրեհծայր լեցուն, հեռացել էր կայարանից եւ ինչ-որ անհայտ պատճառով

կանգ առել այդտեղ: Ետի կողմից մոտեցավ գնացքին Տելեֆոն Սեթոյի թափորը եւ, ինչպես համոզված էր Տելեֆոն Սեթոն՝ վերինի հրաշքով դեմ ելավ հենց այն բաց վագոնին, որի վրա, ճիշտ է, լցված էին «հազարից ավելի», ինչպես պատմում էր հետագայում Տելեֆոն Սեթոն, բայց հենց վագոնի եզերքին տեղ էին բռնել- Հաջի Մանուկոֆ էֆենդին եւ վարսավիր Վասիլը. դրանք, ինչպես երեւում էր, վերջացած համարելով իրենց հայթայթողական ֆունկցիաները («Է. ո՞ւմ պիտի հայթայթեին, երբ բանակ չկար»)- որոշել էին իրենք եւս միանալ ընդհանուրին: «Տուր տեսնիմ պզտիկդ»,- ասաց Հաջին Սեթոյին, եւ Տելեֆոն Սեթոն տվեց Հաջուն իր երեխան. հետո վարսավիր Վասիլի օգնությամբ բարձրացրին եւ Սեթոյի օղլուշաղին: Մնացին իրենք: «Դուք ալ գացեք զնճիլներու վրա կայնեցեք»,- խորհուրդ տվեց Հաջին, որովհետեւ իրենց մոտ ոչ միայն նրանց, այլեւ ասեղի տեղ չկար: Գնացին. երկար հայհոյելուց, խնդրելուց ու աղաչելուց հետո, վերջապես հաջողվեց բարձրանալ զնճիլներու, այսինքն՝ բուֆերների վրա. կանգնեցին կողք կողքի՝ մի-մի ձեռով իրարու բռնած, մյուս ձեռներով՝ իրենց ապրանքը: Հենց այդ ժամանակ գնացքը շարժվեց: Վերջին գնացքն էր դա, որ դուրս եկավ նահիյան այդ քաղաքից, երբ շարժվեց գնացքը- տրաքտրաքոցներն արդեն լսվում էին բերդի տակից: Թշնամին, ինչպես երեւում էր, արդեն մոտեցել էր բերդին: Զնճիլներու վրա կանգնած Տելեֆոն Սեթոն, Քոռ Արութը եւ Մեռելի Ենոքը, ինչպես եւ այդ վերջին գնացքում գտնվող բոլոր նահիրցիները, սարսափահար հայացքները հառած, նայում էին բերդին: Եվ այն միտքը, որ արտահայտեց, բերդին նայելով, Քոռ Արութը՝ գնացքում գտնվող բոլոր նահիրցիների միտքն էր. «Յա՛, մերո՞նք ընչի չեն կրակե...»,- ասաց Քոռ Արութը, զայրացած ու զարմացած:- Բայց նրան, ավա՛ղ, չվիճակվեց լսել իր այդ օրինավոր հարցի պատասխանը, չվիճակվեց ոչ թե այն պատճառով, որ այդ հարցի պատասխանը չկար, այլ այն հասարակ պատճառով, որ երկու վայրկյան չանցած, ինքը՝ Քոռ Արութը, չկար: Եվ ոչ միայն ինքը, այլեւ իր հավիտենական ընկեր Մեռելի Ենոքը: Եվ ահա թե ինչու:- Դեռ հազիվ էր ասել իր վերոհիշյալ, հետագայում պատմական դարձած, նախադասությունը, Քոռ Արութը, երբ գնացքն ուժգին առաջ ցնցվեց. գնացքի ուժգին ցնցումից վայր ձգվեց Քոռ Արութի խուրջինը. այդ վայրկյանին երկրորդ անգամ, ետ ցնցվեց գնացքը. խուրջինը պոկվեց: Քոռ Արութը ձեռից ընկնող խուրջինի հետեւից բնազդաբար կռացավ, որ բռնի խուրջինը. չբռնեց. կորցրեց հավասարակշռությունը... ընկավ:- «Յա՛, Հարո՛ւթ...»,- վախեցած ու լացակումած կանչեց նրա հետեւից Մեռելի Ենոքը.-

ինքն էլ բնազդաբար կռացավ, ձեռքը մեկնեց, որ բռնի ընկերոջը. չբռնեց. կորցրեց հավասարակշռությունը... ընկավ:- Ու հաջորդ վայրկյանին Քոռ Արութի եւ Մեռելի Ենոքի, այդ հավիտենական ընկերների մխրճված դիերի վրայով անցնելով, սարսափահար փախչում էր վերջին գնացքը նահիրյան այդ քաղաքից, ուր արդեն ոտք էր դրել ոսոխը, ուր մահ էր արդեն, ավերմունք, անասելի կոտորած, անպատմելի սարսափ...

Եվ այսպես Քոռ Արութի եւ Մեռելի Ենոքի սխրալի դիերի վրայով անցնելով՝ հեռացավ վերջին գնացքը նահիրյան այդ քաղաքից, եւ թշնամին, ոսոխը, մտավ քաղաք: Մենք չենք պատմի, ընթերցո՛ղ, թե ինչ պատահեց այդ վայրկյանից հետո նահիրյան այդ քաղաքում, որովհետեւ դա վեր է մեր կարողությունից. կասենք միայն, որ քաղաքում մնաց բազում ժողովուրդ, որ եւ սրի քաշվեց ոսոխի հորդաների կողմից: Բայց այս չէ էականը, ընթերցո՛ղ. էականն այն է, որ, բացի, ուրեմն, այդ բազում ժողովրդից, քաղաքում մնացին, եւ սա է ամենաէականն ու սարսափելին,- ընկեր Վառոդյանը, Սերգե Կասպարիչը- բժիշկը եւ Մազութի Համոն... Մինչեւ վերջին վայրկյանը նրանք քաջաբար մնացել էին իրենց դիրքերի վրա, մնացել էին բերդում եւ հենց բերդում էլ գերի էին ընկել ոսոխին,- ընկել էին թշնամու արյունարբու ձեռքը: Այդ ժամանակ գերի ընկածներից ոմանք, որ հրաշքով ազատվել էին հետո, փախել կոտորումից,- այդ հրաշքով ազատվածներից ոմանք հետագայում պատմում էին, որ քաղաք մտնելու երրորդ օրը ոսոխը, մի դաժան նենգամտությամբ հանձնել էր նրանց հորդաների ձեռքը, որոնք եւ- երեւակայո՞ւմ եք- կախել էին ընկ. Վառոդյանին, Սերգե Կասպարիչին- բժշկին, ու իրան՝ Մազութի Համոյին ճիշտ այն երեք հեռագրասյուներից, որ- օ՛, ճակատագրի անօրինակ հեգնանք,- իրա՝ ընկ. Վառոդյանի հրամանով երկու օր առաջ կանգնեցրել էին ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները՝ դեզերտիրներին կախելու համար... Ոսոխից փախածները բավականին մանրակրկիտ կերպով նկարագրում էին այդ սխրալի դեպքը իր բոլոր սրտաճմլիկ մանրամասնություններով, այնպես որ մենք եւս, նրանց պատմածների հիման վրա, կարող ենք արձանագրել այստեղ այդ սխրալի դեպքի սրտաճմլիկ մանրամասնությունները: Դեպքը պատահել է մոտավորապես այսպես: Բերդը մտնելով՝ ոսոխի սպաները գտել են ընկ. Վառոդյանին, բժշկին ու Մազութի Համոյին՝ բերդի ամենաբարձր աշտարակի վրա, նահիրյան եռագույնի դողդոջ փայտի մոտերքը, իրենց մազերը պոկոտելիս:

Տեսնելով նաիրյան հրամանատարների այս անասելի վիշտը՝ խորին ակնածանքով մոտեցել են նրանց ոսոխի նենգ սպաները, մեծ պատիվ են տվել եւ մեծագույն շուքով տարել են քաղաք: Պատմում են, որ ճանապարհին հանդիպած բոլոր ոսոխ-սպաները պատիվ են բռնել նրանց, եւ նույնիսկ ինքը, ոսոխի ամենամեծ փաշան սեղմել է նրանց ձեռքը եւ ցավակցություն հայտնել նրանց վշտի համար: Այսպիսի՝ ահա մի չտեսնված վերաբերմունք են գտնում ընկ. Վառոդյանը, բժիշկը եւ Մազութի Համոն ոսոխի հրամանատարության կողմից, բայց, երկու օր անց, մի դաժան նենգությամբ հանձնվում են նրանք ոսոխի թափթփուկ հորդաների ձեռքը, որոնք եւ կախում են նրանց ու ենթարկում զարհուրելի գանահարությանց: Նրանք, ոսոխի այդ թափթփուկ հորդաները աջից կախ են անում ընկ. Վառոդյանին, ձախից՝ բժշկին, իսկ մեջտեղից- իրան՝ Մազութի Համոյին,- եւ սա չէ դեռեւս ամենազարհուրելին ու ամենաքստմնելին:- Ամենազարհուրելին եւ ամենաքստմնելին այն է, որ նրանք, ոսոխի այդ թափթփուկ հորդաները, ասում են, մի տախտակ են փակցնում երրորդ հեռագրասյան մեջտեղը, Մազութի Համոյի գլխավերեւը,- ու գրում վրան, երեւակայո՞ւմ եք, նաիրյան տառերով.

Մ. Հ. Ա. Ն.

որ նշանակում է՝

«Մազութի Համո՝ Արքա Նաիրի»: